



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

361(47.96)
Հ-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ

ՎՐԱՍՏԱՆԻ ՃՅՈՒՂԸ

ՅԵՎ

ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2-24
47

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ

ՎՐԱՍՏԱՆԻ ՃՅՈՒՂԲ

ՑԵՎ

ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1003
1925



05 JUN 2013

43.220

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՃՅՈՒՂԸ

ՅԵՒ

ՆԲԱ ԳՈՐԾՈՒԽԵՑՈՒԹՅՈՒՆ

I.

Համաշխարհային խմբերի լուսական պատերազմը, տաճկական յերկու արշավանքները, քաղաքացիական կոփը Հայաստանի համար այն հետևանքն ունեցան, վոր յերկիրն ավերվեց, ժողովրդի տնտեսությունը, բացառությամբ մի յերկու գտավոր, իսպառ քայլայվեց, տռաջյեկավ մի աճազին բազմություն թե տեղացիների և թե զաղթականների, զուրկ վորեւ ապրուառի միջոցից, սերմացուից, լծկանից, յերկրագործական գործիքներից, նույնիսկ բնակարանից։ Այս ամենը բավական չէր, 1921 թվականին յերկիրը յենթարկվեց մի նոր պատճառի։ յերաշան ու կարկուաը շատ տեղերում վոչնչացրին և այն, ինչ ազատվել եր տրորումից վերոնիշալ հանգամանքների պատճառով։

Այսպիսի պայմաններում սովոր ու համաձարակն անխռուսափելի էին, և ժողովրդի ֆիզիքական զոյսւթյունը սպառնալիքի տակ եր։

Յերկիրն այս զրությամբ միմիայն իր սեփական ույժերով անզոր եր կռվելու հիշատ չարփների դեմ։

Յույսը դրսի ույժերի վրա յեր։

Այս ույժերից ամենազորեղը և ամենահոսալին Խորհրդային Խուսաստանն եր, վորը, Հնացած ինքն ևս գտնվում եր խիստ ծանր պայմաններում, բայց շնորհիվ իր մեծության և զեսպի նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը տածած իր համակրանքի՝ կարող

եր, այնուամենայնիվ, մեծ չափերով ոգնության հասնել կորուստի մատնված այս ժողովրդին:

Հայաստանի կառավարությանը վիճակված եր համախմբելյերկրի մնացած ույժերը և առաջ բերել Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը:

Դրաի մյուս ույժը, վորի վրա կարող եր հույս դնել յերկիրը, ամերիկացիներն ելին:

Նրանք արդեն յերկրում ունեյին իրենց կազմակերպությունը, Ամերիկական Կոմիտեն, վորը մինչև այդ դորձել եր մեր յերկրում: Այժմ նրան ևս վիճակված եր կրկնապատկել իր ույժերը կառավարության հետ միասին՝ դուրս բերելու ժողովրդին անհախընթաց ժանր վիճակից:

Բայց մենք ունեյինք և սեփական ույժեր. դա այն մեծ հայությունն է, վոր պատմական հանգամանքների պատճառով, գաղթել և ոտար յերկրներ, ստեղծել այսուեղ իր համար բարեկեցիկ կյանք և դեռ պահպանել և իր հոգեոր կապը մայր յերկրի, նրա մեջ ապրող ժողովրդի հետ:

Այն համոզմունքն ու ջերմ հավատը, թե այդ հայությունը բարոյական կապերով կապված ե մայր յերկրի և նրա ժողովրդի հետ և պարտականություն ունի դեռի այդ ժողովուրդը, թե նա դեռ շատ անելիքներ ունի և կարող ե անել, բայց կազմակերպված չե, անապահություն և հանդիսանում Հայաստանի Օգնության Կոմիտեյի սկզբնավորության և գոյության դլիսավոր հիմքը:

Այդպիսի մի միություն կազմակերպելու նպատակով 1921 թ. սեպտեմբերին՝ Վրաստանի ու Հայաստանի հայ հասարակական գործիչները, անկախ կուսակցական խարություններից, ժողովրդին Յերեալանում:

Այդ ժողովում ծրագրվեց և ընդունվեց Հայաստանի Օգնության Կոմիտեյի ստատուտը, վորը հաստատվեց Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի կողմից: Կարեւոր ենք դանում ստորև մեջ բերել այդ ստատուտի եական կետերը:

Այդ ստատուտի հիման վրա՝ Հայաստանի Օգնության Կոմիտեն, անկախ իր անդամների քաղաքական գավանանքից և կուսակցական հանգամանքից, իր նպատակներով և թե իր կազմակերպման սիստեմից, հանաչվում է վրագրվեց Հայաստանի Օգնության կոմիտեների համար:

Կոմիտեն, նա իրեն հայտարարում է չեզոք՝ քաղաքական և կուսակցական պայքարի հանդեպ:

Նրա անմիջական նպատակն է՝ օգնության հասնել Հայաստանի սովորական վրագրականության և իր այդ գործունեյության ընթացքում նաև ոժանդակել յերկրի ընդհանուր շինարարության գործին:

Այդ ստատուտով Կոմիտեն դրված է արտօնյալ դրության մեջ. նա գտնվում է բացառապես Ժողովրդական Խորհրդի հակողության ներքո և չի յենթարկվում առանձին ժողովրդներին, ինչպես նաև տեղական իշխանություններին:

Կոմիտեյի հասցեյով ուղղված դրամները, իրերը և ընդհանրապես ամբողջ գույքը ազատ են պետականացումից, բռնագրավումից և այլ սահմանափակիչ որենքներից ու միաժամանակ՝ ներքին թե արտաքին փոխազդրությունների ընթացքում ողտվում են պետական գույքերին վերապահված արտօնություններով:

Կոմիտեն իր արամազրության յենթակա դրամները, ընդհանրապես գույքը, գործադրում և ըստ իր հայեցողության, ստատուտով նախատեսված նպատակների սահմաններում, իսկ իր նպատակներին համապատասխանող հատուկ նվերները գործադրում և համաձայն նվիրատուի կամքի:

Կոմիտեն իրավազոր և դիմումներ անել Ժողովրդների Խորհրդի նախագահին և առանձին ժողովրդներին իր գործունեյության հետ կապված և վերջինից բղխող հարցերի մասին, ստանալով նրանցից, ինչպես և ընդհանրապես Խորհրդային իշխանության կենտրոնական թե տեղական մարմինների կողմից, լայն աջակցություն:

Կոմիտեյի կենտրոնն է Յերևանը:

II.

Վրաստանում ապրող հայ գործիչները, վերադառնալով Թիֆլիս, նախաձեռնեցին կազմակերպելու Թիֆլիսում Հայաստանի Ոգնության Վրաստանի Կոմիտե, վորը պիտի լիներ կենտրոնական՝ Վրաստանում բացվելիք տեղական կոմիտեների համար:

Թիֆլիսի Կոմիտեն կազմակերպվեց 1921 թ. հոկտեմբերի վերջերին:

Կովկասի ամենաբարձր մարմինի, այն և՝ Կավբյուրոյի նույն 1921 թ. գեկտեմբերի 31-ի վորոշմամբ՝ թույլատրվեց Հայաստանի

Ոգնության կոմիտեյի գործունեյությունը վրաստանում։ Այդ վորոշմամբ կովկասի Բյուրոն դիմում և վրաստանի հեղափոխական կոմիտեյին, վոր նա առաջարկե իրեն յենթակա բոլոր խորհրդային իշխանություններին՝ ցուց տալ Հայաստանի Ոգնության կոմիտեյին մյուս, այն և Վոլգայի և Վրաստանի Սովելոց Ոգնության կոմիտեներին (Պոմպոլներին) հավասար և նույնորինակ աջակցություն։

Դեռ նախքան իր իրավական դրությունը այսպես հարթելը, Հայաստանի Ոգնության կոմիտեն վրաստանում կազմակերպել եր իր ապարատը՝ վարչությունը, պրեզիդիումը, վերաստուգիչ հանձնաժողովը և դիվանը։

Անհրաժեշտ եր հրավիրել և լայն հասարակության աջակցությունը. դրա համար պետք եր ծանոթացնել նրան յերկրին սպառնացող վտանգի, յերկրի կարիքների, նրա տնտեսական ուժեցերի և այն միջոցների հետ, վորոնցով կարելի յե վերականգնել յերկրի տնտեսական զրությունը։ Մյուս կողմից, անհրաժեշտ եր հասարակությանը ծանոթացնել Հայաստանի Ոգնության կոմիտեյի, նրա սպասակիների և անելիքների, նրա իրավական դրության հետ և այլն. մի խոսքով պրոպագանդ մղել զրավելու յերկրից դուրս գտընչող հայության ուշադրությունը և գործակցությունը։

Այս նպատակով Հայաստանի Ոգնության կոմիտեյի վրաստանի ձյուղը հրատարակեց «Ոգնիք Հայաստանին» վերատառությամբ միուրցա թերթը, վորը տարածվեց Թիֆլիսում և գավառներում, և ձեռնարկեց ժողովածուի հրատարակության ինչ-ինչ սպատճառներով հնարավոր չեղավ ժողովածուի հրատարակելը. նրա համար պատրաստած հողվածներից տպագրվեցին «Նոր Աշխարհ» ամսագրում յերեք հողված, այն և Հ. Մելիք-Փաշայանի—Հայաստանի ջրագին հարստությունը», Հ. Փիրալյանի—«Հայաստանի յերկրագործական արդյունաբերությունը» և Ա. Թափեռոյանի—«Հայաստանի մնացաները և նրանց նշանակությունը»։

Այդ նույն նպատակի, այսինքն՝ պրոպագանդի և ինֆորմացիայի համար՝ կոմիտեն կտօմեց մի ընդարձակ զեկուցումն յերկրի շնորհարարական կարիքների և նրանց բանարարող միջոցների մասին. այդ զեկուցումն ուղարկվեց արտասահման և հանձնարարվեց ներկացանել արտասահմանի զանազան գաղտնաբառում գործող հայկական ընկերություններին ու հաստատություններին և այսուղ լույս տեսնող պարբերական հրատարակությունների խմբագրություններին։

Նույն պրոպագանդի և ինֆորմացիայի նպատակով՝ կոմիտեյի գործունեյության մասին հաճախակի տեղեկություններ են տրվել տեղական թե՛ հայ և թե՛ ռուս մամուլին։

Կոմիտեյի անդամներին գործերի դրության վերաբերմամբ իրազեկ պահելու և նրանց կոմիտեյի հետ սերտորեն կապելու համար, բացի տարեկան ընդհանուր ժողովներից, կայացել են յեռամսյա ժողովներ։

Վերջապես այն ներկալացումները, զբոսանքները և յերեկույթները, վոր կազմակերպել ե կոմիտեն իր գործունեյության ընթացքում, բացի նյութական միջոցներ հայթայթելու նպատակից, ծառայում եին և իբրև ագիտացիայի միջոց՝ հրավիրելու լայն հասարակության ուշադրությունը դեպի մայր յերկրի շինարարական գործը։

Վրաստանի կոմիտեն իր գործունեյության հենց առաջի որերին գրություններով զիմեց Վրաստանի զանազան քաղաքներում ապրող հայ գործիչների՝ Ախալցխա, Ախալքալաք, Բաթում, Գորի, Թելափ, Սղնախ, Քութայիս, Սուխում և այլն։ Մեր գրություններն արձագանք են գտել Բաթումում, Սուխումում և Ախալցխայում։ Բաթումի կոմիտեն կազմվեց 1921/1922 թ. և ժամանակին մեծ ծառայություն մատուցեց Բաթումում հավաքված հայ գաղթականության։

Ախալցխայի ճյուղը կազմակերպվեց նորերս մեր կոմիտեյի նախաձեռնությամբ։

Մեր կոմիտեն զիմել եր Սուխում Աբխազիայի աշխատավոր հայերի կուտառ-կրթական Միության։

Այդ Միությունը իր վրա յե վերցրելնախաձեռնություն կազմակերպելու Աբխազիայում Հայաստանի Օգնության կոմիտեյի ճյուղը։ Այդ նպատակով Միության լիազորները, վոր ուղարկված են Աբխազիայի բոլոր ույոնները՝ կազմակերպելու յերկրի աշխատավորության համագումար, վորը նշանակված և սույն տարվա սեպտեմբերի 10-ին, միաժամանակ հանանգված են տեղերում բացատրելու Հայաստանի Օգնության կոմիտեյի նպատակը և առաջարկելու, վոր այդ համագումարի համար ընտրված պատվիրակները լիազորված լինեն համագումարում ընտրելու և Հայաստանի Օգնության կոմիտե։

III.

Մեծ նշանակություն տալով Խորհրդային Ռուսաստանի հայության համախմբմանը մայր յերկրի վերաշնության գործի շուրջը կազմակերպելով Հայաստանի Ողնության կոմիտեյի ճյուղեր, մեր կոմիտեն, այնուամենայնիվ, այն համագումարին ե, թե Հայաստանի Ողնության կոմիտեն կատարած չի լինի իրեն վիճակված գերը, յեթե նա չկարողանա միացնել այդ գործի շուրջը արտասահմանան հայությունը:

Այդ նպատակի համար մեր կոմիտեն, աջակցելով պլիսավոր վարչությանը, դիմել և արտասահմանի զանազան հասարակական գործիչների: Այդ գրություններով չե, սակայն, վոր պիտի հաստատվի այդ կապը. դա լինելու յե միմիայն համագումարի միջոցով:

Կոմիտեյի առաջին համագումարը, վորը սկիզբ դրավ նրա գույթյանը, տեղի ունեցավ շտագողական կերպով. նու չուներ իր նախապատրաստական կազմակերպությունը, վորը սուաջուց քննության առներ և զեկուցումներ կազմեր այն բոլոր հարցերի մասին, վոր պետք և զրվելին համագումարում:

Մյուս կողմից, համագումարը այն ժամանակ գտնվում եր տիրող և յերկրին սպառնացող սովոր ուժեղ տպավորության տակ:

Թե մեկ և թե մյուս հանգամանքը ազդել ելին կոմիտեյի ստատուարի վրա:

Այդ ստատուարի, ինչպես տեսանք, կոմիտեյի անմիջական նպատակն է համարվում օղնության հասնել Հայաստանի սովորակարինակության և իր այդ գործունելության ընթացքում՝ նու ուժագույն յերկրի բնդհանուր շինարարության գործին:

Յերկրի շինարարության ոժանդակությունը այսպիսով կրում եր միմիայն ժամանակոր բնույթ և այդ կանոնադրության իմաստով, սովոր վերջանալու հետ միասին՝ պիտի վերջ տրվեր և Հայաստանի Ողնության կոմիտեյի գոյությանը:

Աչքի առաջ ունենալով, վոր վերաշնության գործը յերկար տարիների գործ և և անհրաժեշտ ե, վոր հասարակությունը և աջակցի պետականը այս գործում, մեր կոմիտեն վորոշեց կոմիտեյի նպատակների շարքում զնել առաջին յերկրի վերաշնության գործը:

Մյուս կողմից, ի նկատի ունենալով գործի հարատևությունն ու մեծությունը, և այն, վոր այդ գործը պահանջում և անագին նյութական միջոցներ, մեր կոմիտեն գտավ, վոր նա պետք և ունենա մի աղբյուր, վոր մշտապես պահպաներ նրա գոյությունը և մի ապարատ, վոր նպաստեր շինարարական գործին:

Կոմիտեն՝ իբրև այդպիսի ապարատ՝ բնդունեց շինարարական բանկը:

Մասնագետներից կազմված առանձին հանձնաժողովի միջոցով կոմիտեն մշակեց ալգորինակ բանկի հիմնական կետերը և նրա կանոնագրությունը:

Մի ուրիշ աղբյուր, վորը կարող եր միջոցներ տալ կոմիտեյին՝ իր նպատակն իրագործելու, այդ համահայկական վիճակախաղն և, վորից կարելի յե սպասել մեծ արդյունք, յեթե կանոնավոր կազմակերպված լինի այն:

Մեր կոմիտեն մշակեց ընդհանուր վիճակախաղի ծրագիրը և նրա կանոնները:

Ինչպես վերև յիշեցինք, կոմիտեյի ստատուար կազմված և հաղճեալ, շատ հարցերի և փոխհարաբերությունների վերաբերմաբն նրա մեջ չկա պատասխան:

Մեր կոմիտեն՝ կոմիտեյի նպատակի, կազմակերպման, միջոցների, իրավական դրամական վերաբերող հոդվածների մեջ առաջարկեց մտցնել լրացումներ և փոփոխություններ:

Մեր այդ առաջարկությունները հավանություն գտան յերկրորդ համագումարի կողմից, և Հայաստանի Ողնության կենարունական կոմիտեն, կազմելով նոր ստատուար, պիտի ներկայացներ Հայաստանի կառավարության՝ ի հաստատություն:

Ինչ վերաբերում և շինարարական բանկի և ընդհանուր հայկական վիճակախաղի կազմակերպման, համագումարը թե նույնպես տվալի իր հավանությունը, բայց նա չձեռնարկեց առաջարկիված այդ միջոցների իրականացման:

Այդպիսի վերաբերմունքը հետեանք եր այն բանի, վոր արտասահմանյան հայությունն այդ համագումարում շատ չնշին, այն եւ պատահական մասնակցություն ուներ. նույնիսկ Խորհրդային Ռուսաստանի հայությունը անհշան չափերով եր ներկայացված այդ համագումարում:

Այդ պատճառով ել մեր կոմիտեն նույն առաջարկները՝ վորոշ

փոփոխություններով՝ մտցնելու յև նաև առաջիկա համագումարում քննվելիք հարցերի մեջ:

Մի ուրիշ առաջարկություն, վորով դիմելու յև համագումարին մեր կոմիտեն, դա գյուղատնտեսական, կուլտուր-կրթական, առողջապահական և հասարակական ոգտագետ կառուցումների ֆոնդեր հիմնելու ծրագիրն եւ:

Ի նկատի ունենալով, վոր Հայաստանի Օգնության Կոմիտեն իր նպատակներով մի մնայուն հասարակական կազմակերպություն ե, վոր նրա անընդհատ գործունեյության համար անհրաժեշտ ե, վոր նա ունենա իր գոյության համար մշտական միջոցներ, Կոմիտեն գոնում ե, վոր պետք ե ստեղծել այդ ֆոնդերը, վորոնց նպատակն ե լինելու ստեղծել մշտական և վստահելի աղբյուրներ, վորպեսզի Կոմիտեյի գործունեյությունը լինի նորմալ, ընդհատումներից ապահովված և վոր այդ գործունեյությունը ընթանա մշակված ծրագրով համապատասխան ժամանակի և կրական իրական պահանջների:

IV

Կոմիտեյի գործունեյությունը յեղել ե յերկու տեսակի. մեկը, վորը կատ չունի նրա նպատակների հետ, առաջ ե յեկել այն հանգամանքից, վոր Թիֆլիսն ինքը ունի բավականաշատ կարույրաներ, նյութական ծանր գրության մեջ գտնվողներ, և չկա վոչ մի հասարակական հիմնարկություն, վորը իր վրա վերցներ նրանց այս ծանրը որերին ոգնություն հացնելու պարտականությունը:

Առանձնապես ծանր ե գրությունը Թիֆլիսում ապրող հայ գաղթականության և մտավորականության, մասնավորապես ուսուցիչների, գերասանների, գրականագետների, վորոնք գործազուրկ են մնացած, և անգամ նրանց համար, վորոնք գործ ունեն:

Մանավանդ մեծ ե նրանց կարիքը հագուստեղենի տեսակետից:

Ընդառաջ գնալով այդ կարիքին, Կոմիտեն կազմակերպեց հագուստեղեն մատակարարելու գործը:

Հայաստանի Օգնության Կոմիտեյին կից կազմվեց հագուստեղեն մատակարարող մի հանձնաժողով, վորի նպատակն ե մատակարարել հագուստեղեն կարիքավոր հայ մտավորականներին, նրանց ընտանիքներին և հայ գաղթականներին:

Հարավորության գեպքում՝ արվում ե հագուստեղեն և տեղական շքավոր հայ ընտանիքներին:

Հագուստեղենը տրվում ե մատչելի գներով, իսկ շատ կարիք-

քավորներին՝ ձրիաբար: Հագուստեղենը գնվում ե Ամերիկական կոմիտեյից:

Այդ Հանձնաժողովի համար մշակված են կանոններ և հրահանգներ, վորոնցով վորոշվում են հագուստեղենի բաշխման յեղանակը, հանձնաժողովի փոխհարաբերությունը կոմիտեյի ու նրա պրեզիդիտումի հետ և այլն:

Մինչև այժմ այդ հագուստեղենից ոգտվել են 70 ուսումնարան, գերասանների և յերաժիշտների, հայ գրականագետների միությունները և բազմաթիվ գործազուրկներ ու գաղթականներ:

Ոգտվողների ներկայացրած վկայականներից յերեսում ե, վոր հագուստեղեն ստացել են աշխատավոր մտավորականությունից՝ 1968 հոգի, բանվորներից՝ 375 հոգի. ձրի բաժանված ե մոտ 1000 հոգու, զինավորապես գաղթականներին:

Կարիքն այնքան մեծ ե, վոր հագուստեղենի սուր կարիքը դեռ չի բավարարված և այս գործը կոմիտեն շարունակելու յեւ ապագայում եւ:

Բացի այդ, Կոսիտեն ստացել ե Վիեննայի և Բուխարեստի հայ գաղութներից հագուստեղեն ու կոշկեղեն Թիֆլիսի հայ ուսուցչության և մտավորականության համար և Խորեն եպիսկոպոս Մուշրոբեցյանից կտավ՝ նույն մտավորականության համար:

Այդ հագուստեղենը բաշխվել ե տեղական 450 ուսուցիչներին, հիսուն այլ մտավորականների և յերեսուն գաղթականների: Իսկ վերը հիշած կտավը բաժանվել ե 28 հոգու մեջ:

Նույն նպատակին ե ծառայում և մի ուրիշ գործ, վորին ձեռնարկել ե Կոմիտեն. դա մասուֆակառուրայի վաճառքն ե: Ամերիկական Կոմիտեյից գնած շորերն ընդհանուր առմամբ հին շորեր են. բացի այդպիսիներից, մեր մտավորականությունը, նույն ուսուցչությունը և այլն, թեև սահմանափակ չափերով, բայց և այնպես կարիք ունի նոր կտորեղենի: Մանուֆակտուրայի շուկայի գները չափազանց բարձր են և անմատչելի: Մեր Կոմիտեն բանակցություն սկսեց Մուկվայի տեկստիլ սինդիկատի Թիֆլիսի բաժանմունքի հետ և ձեռք ե բերում մասուֆակտուրա՝ պարագաննի ապրանքների արժողությամբ՝ վորոշ զիջումով և վորոշ ժամանակով, ուստի հնարավորություն ունի մատակարարել մանուֆակտուրա այնպիսի կոլեկտիվների, ինչպես ուսուցչությունն ե, Կոմիտեյի ան-

դամներին ու նրանց ընտանիքներին շուկայի բաղդատմամբ ավելի մատչելի գներով:

Մանուքակառւրայի վաճառքի գործը Կոմիտեն վարում եւ նույն ապարատի միջոցով, վորը վարում եւ հին շորերի վաճառքը:

Մյուս հարցը, վորով զբաղվել եւ Կոմիտեն, դա Թիֆլիսում հավաքած գաղթականության հարցն եւ:

Զանազան տեղերից, զիսավորապես Հյուսիսային Կովկասից, անցյալ տարվա ամառը ժողովվել ելին Թիֆլիսում գաղթականներ՝ Հայաստան անցնելու համար: Չուրկ վորեկ միջոցից՝ շարունակելու իրենց ձանապարհը, սովոր հյուծված այս գաղթականները ժամանակավոր ապաստարան ելին գտել յեկեղեցիների բակերում, անձրեփ ու արեփ տակ:

Այդ գաղթականների մեջ տարածված ելին զանազան հիվանդություններ, զիսավորապես մալարիա:

Այդ հիվանդությունների հետեանքով տեղի ելին ունենում մահցության շատ դեպքեր:

Կոմիտեն իր վրա վերցրեց նրանց Հայաստան փոխադրելու, իսկ մինչև այդ՝ նաև նրանց սնունդ տալու և բժշկական ոգնություն հասցնելու գործը:

Գաղթականները՝ թվով մի քանի հարյուր հոգի՝ ստանում ելին Կոմիտեից սնունդ, իսկ հիվանդները՝ բժշկական ոգնություն: Բժշկական գործը՝ Կոմիտեի հրավերով՝ տանում ելին մի բժիշկ և մի ֆերզերունի: Վանքի բակում հիմնած ամբուլատորիան որական հաճախում ելին մինչև քառասուն հիվանդ: Բժշկական ոգնություն եր հասցնվում նաև Թիֆլիսի բաղաքամասերում, Սարութմալոյում ու Ռիթաճալայում բնակվող գաղթականներին:

Բացի այդ, Կոմիտեն կազմակերպեց յերկու ապաստարան, մեկը տառող գաղթականների, մյուսը հիվանդների համար:

Կոմիտեն գաղթականներից 248 հոգու փոխադրեց Հայաստան, տարով նրանց ձանապարհածախք, մնունդ և, տեղ հասնելուց հետո, մի քանի որվա ապրուստ:

Այսուհետև ապաստարանում մնացել ելին միայն մի քանի հիվանդ, վորոնց առողջանալուց հետո, ապաստարանը փակվեց:

Բացի վերը հիշված գաղթականներից, Կոմիտեն ստիպված եր նպաստաներ առ նախ տեղացիներին: Կարիքավորների թիվը շատ մեծ է, բայց Կոմիտեն հնարավորություն ուներ ոգնելու միմիտ:

ամենածանր պայմաններում գտնվողներին: Ողնությունը տրվել երամով, հիվանդներին հիվանդանոց տեղափոխելով և այլն:

Կոմիտեի գործունեյության այս շրջանում մեր հասարակական հայտնի գործիչներից մի քանին ընկան նյութական շատ ծանր դրության մեջ՝ թե հիվանդության և թե այլ պատճառներով: Մեր Կոմիտեն իր միջոցներից բաժին հանեց՝ թեթևացնելու նրանց դըրությունը նրանց կյանքի ամենագառն որերին:

Գալով Կոմիտեի բուն նպատակին, յերկրի վերաշնուրթիան գործին, Կոմիտեն աչքի առաջ ունենալով, վոր Հայաստանն առավելապես զյուղատնտեսական յերկր ե, վոր նրա վերաշնուրթյունը պայմանավորված ե նրա զյուղացիության վերականգնումով, վորոշեց հիմնել զյուղատնտեսական ֆոնդ:

Այդ ֆոնդը կազմելու նպատակին եր ոգնության համել կարիքավոր զյուղացիության, մատակարարելով նրան զյուղատնտեսական գործիքներ, սերմացու, լծկաններ, բուժիչ միջոցներ և այլն:

Ի նկատի ունենալով, վոր այդ նպատակը զգալի կերպով իրագործելու համար՝ բավականաշափ միջոցներ են պահանջվում և վոր Կոմիտեի միջոցները բավական չեն, Կոմիտեն բանակցություն ըսկանեց Ամերիկական Կոմիտեի հետ՝ ընդհանուր ույժերով կազմակերպելու այդ գործը:

Այս հարցի վերաբերմամբ մեր և Ամերիկական Կոմիտեի միջև այս տարիքա մարտի 20-ին կայացավ համաձայնություն:

Այդ համաձայնության գործությամբ վերը հիշված նպատակի, այն ե՝ Հայաստանի կարիքավոր զյուղացիության ոգնելու համար, մատակարարելով նրան զյուղատնտեսական գործիքներ, սերմացու, լծկաններ, բուժիչ միջոցներ և այլն, Հայաստանի Ողնության Կոմիտեն և Ամերիկական Կոմիտեն մացնում են զյուղատնտեսական փոնդը յուրաքանչյուրը հինգ հազար դոլար, իսկ ընդամենը տասը հազար դոլար, մասամբաս, հավասար չափերով: Հիմնական կապիտալի ավելացումը հետագայում կախված ե Հայաստանի Ողնության Կոմիտեի բարեհայեցողությունից. վրա մեջ Ամերիկական Կոմիտեն մասնակցություն չունի: Գործը ամրողապես վարում ե Հայաստանի Ողնության Կոմիտեն:

Եր գործունեյության համար Հայաստանի Ողնության Կոմիտեն ընարում ե շրջան կամ շրջաններ, ուր հիմնում ե պահեստներ:

Գյուղացիներին գործիքների, սերմացուի և այլ իրերի մատակա-

բարումը կատարվում է վճարով, իրերի ինքնարժեքով, պլյուս միայն կատարված ծախքերը։ Ապրանքները կրեդիտով բաց թողնելու գեպքում, նրանց արժեքը ապահովվում է բերքով կամ այլ միջոցներով։

Այս պայմանի հիման վրա, Հայաստանի Ոգնության կոմիտեն և Ամերիկական կոմիտեն մտցրել են ֆոնդի համար յուրաքանչյուրը 5000-ական դոլար, միասին 10,000 դոլար։ Հայաստանի կոմիտեն՝ Հողժողկոմի հավանությամբ՝ իր գործունեյության համար իրեն շըրջաններ ընտրել և Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառները. գործունեյության կենտրոնն է Ալեքսանդրապոլ քաղաքը, վորտեղ կոմիտեն ունի իր լիազորն ու պահեստը։

Նախ քան գործիքներ գնելը կոմիտեն դիմեց Հայաստանի Հողժողկոմին և տեղումն ու Հայաստանում գործող մասնագետներին, լնդրելով մասնանշել այն գործիքները, վոր ցանկալի յե ձեռք բերել։

Հողժողկոմը և մասնագետներն արձագանք տվին կոմիտեյի գիմումին։

Գյուղասահետական ֆոնդի գործը տարվում է հետեւյալ կերպով. կոմիտեն իր միջից կազմել ե մի հանձնաժողով, վորը իր կողմից հրավիրել ե մասնագետների մի մայուն հանձնաժողով— Գյուղատնտեսական ֆոնդի Հանձնաժողով։ Գնումները կատարում ե այդ հանձնաժողովը, նախապես խորհրդակցելով մասնագետների հետ, վորոնք նայում են գնելիք ապրանքը և տալիս իրենց կարծիքը՝ թե նրա վորակի ու պիտանության և թե արժեքի մասին։

Գնված ապրանքներն ուղարկվում են Ալեքսանդրապոլ մեր լիազորին, վորը վաճառում է կոմիտեյի պահեստից։

Զնայելով, վոր միայն մի քանի ամիս ե, ինչ գոյություն ունի մեր պահեստը, բայց և այնպես սկսած գործը մեծ ժողովրդականություն և ստացել շրջանի և նույնիսկ շրջանից գուրս գտնվող գյուղացիության մեջ. գործիքներ գնելու համար՝ մեր պահեստին և դիմում, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գյուղացիներից բացի, նաև Ախալքալաքի շրջանի գյուղացիությունը։

Այս հաջողությունը պետք է վերադրել գործի այժմեականությանը—այն հանգամանքին, վոր այս ձեռնարկությամբ մեր կոմիտեն բավարարում է գյուղացիության ամենասուր կարիքներից մեկը, հետո ապրանքների հասեմատական եժանությանն ու նրանց վորակի լա-

գությանը և, վերջապես, առևտրի ձեին, վորը կատարվում է առանց սակարկության։

Մեր պահեստն արդեն խոշոր գեր է կատարում տեղական շուկայում, ազգելով մասնավոր առևտրի վրա։ Դրան կարող է ապացույց լինել հետեւյալ փաստը. գերանդիները հուլիսի վերջերին մեր պահեստը ծախում եր 3,500,000—4,000,000 ռ., դրա հետևանքով նույն գնով ստիպված եյին վաճառել մասնավոր առևտրականները։ Մի քանի որ մենք գերանդիներ չունեյինք, դրա համար ել վաճառականներն այդ որերին բարձրացրին գերանդիների գները մինչեւ 5—5^{1/2} միլիոնի։

Մեր ուղարկած ապրանքներն են՝ բացի սովորականներից՝ գերանդի, բահ, կացին և այլն, յեվրոպական գութաններ, փոցիսեր, քամհար մեքենաներ։ Այս վերջին տեսակի գործիքները, թեև գոյություն ունեյին զյուղական տնտեսությունների մեջ, բայց շատ սահմանափակ չափով։ Մեր ուղարկած մեքենաների մեջ կան և այնպիսիները, վորոնք նորություն են տեղական գյուղացիության համար և վորոնց ներմուծումը տնտեսական մեծ նշանակություն կարող է ունենալ յերկրի համար, որինակ՝ սերմացուի զտիչ մեքենա (արիեր) և կալսող մեքենա։

Առայժմ փորձի համար ուղարկված են այդ մեքենաներից մի-մի հատ. աջողության գեպքում՝ կոմիտեն այդ գործիքներից մեծ քանակությամբ ներմուծելու յե յերկնիբը։

Մի ուրիշ ձեռնարկ, վոր սկսել ե մեր կոմիտեն, վերաբերում է մեղվաբուծության։

Կանոնավոր մեղվաբուծության համար, ինչպես հայտնի յե, գործ են ածվում արհեստական խորիսիներ (չեչ). խորիսիները պատրաստվում են առանձին մեքենաներով, վորոնք իրենց արժողությամբ մատչելի չեն փոքր տնտեսություններին։

Այդ հանգամանքը հնարավորություն ե տալիս նման մեքենա ունեցողներին՝ շահագործելու գյուղացիությանը՝ թանգ զնով մատակարարելով նրանց խորիսիները։

Այդ չարիբի գեմ կովելու համար՝ կոմիտեն ձեռք բերավ այդ մեքենայից, վորով Ալեքսանդրապոլի մեր արհեստանոցում պատրաստվում են խորիսիներ՝ թե մեր և թե գյուղացիների բերած մամից։

Մինչեւ այս տեղեկադիրը կազմելու որը, մեր կոմիտեն գնել է ուղարկել ե Ալեքսանդրապոլ հետեւյալ գործիքներն ու իրերը.

1) Գերանդիներ	3,700 հատ
2) Օղակներ	2,000 ք

3) Յեղաններ	1,626	»
4) Մուրձեր	120	»
5) Թիակներ	500	»
6) Գութաններ	42	»
7) Քամար մեքենա	6	»
8) Փողխեր	600	»
9) Սրիչներ	1,296	»
10) Կալսող մեքենա	1	»
11) Զտիչ մեքենա	1	»
12) Հնձող մեքենա	1	»
13) Խորիս պատրաստող մեքենա	1	»
14) Կոմպելտ մեղքաբուծական գործիքների	1	»
15) Փեթակներ	20	»
16) Փեթակների շրջանակներ	200	»
17) Թուղիկ	30	փութ

Ժողովրդի առողջապահությանը նպաստելու համար Կոմիտեն դիմել և զանազան հաստատությունների աջակցության:

Կոմիտեն ստացավ, իբրև նվեր, Ցեղիպառի Բարեգործական Ընկերությունների Միությունից քինոն, և այս հանգամանքը հնարավորության տվեց մեզ մասնակցություն ունենալ մալարիայի գերապարելու գործում:

Այս տարի Հայաստանի կառավարությունը յերկրի զանազան մասերում հաստատել և բժշկական կայաններ, վորոնցում հիվանդները յենթարկվում են քինոնիզացիայի:

Հայաստանի Ոգնության Կոմիտեյի գլխավոր վարչությունը իր վրա յել վերցրել Դամարլուի, Եջմիածնի գավառների կայանները և մեր Կոմիտեն իր ստացած քինոնը ուղարկել և գլխավոր վարչությանը գործադրելու հիշյալ շրջաններում:

Մեր Կոմիտեն, նույնութեան իբրև նվեր, ստացել և զանազան գեղորակը Թիֆլիսի իտալական միսսիայից այդ գեղորակը ևս ուղարկվում է Հայաստան:

Ահա այս, ինչ կարողացավ կատարել մեր Կոմիտեն այս միջոցներով, վար նա ունեցավ իր արամագրության տակ:

V.

Հաշվետվության ընթացքում, այս և հունվարից 1922 թ. մինչև սեպտեմբերի 1-ը 1923 թ. Կոմիտեյի վարչությունը ունեցել և շարաթական մեկ սպորտական նիստ, իսկ յերբեմն և արտակարգ նիստեր, ընդամենը 81 նիստ:

Նիստերին խորհրդակցական ձայնով մասնակցում ելին վերասուզիչ հանձնաժողովի անդամները և ֆինանսական հանձնաժողովի նախագահը:



Կոմիտեն ունի հետեւյալ կազմը:

Վարչությունը թիվ 1 սեպտեմբերի 1922 թ.

Նախագահական կազմ:

Փոխ-Նախագահական կազմ:

- 1. Սարգս Խանոսյան
- 2. Գարեգին Մելոյան
- 3. Կարապետ Արյան
- 4. Նիկողայոս Սարգսյան
- 5. Անուշավան Ստամբուլյան
- 6. Արամ Յաղուրյան
- 7. Դարիա Թագեսոյան
- 8. Արշալույս Միհիթարյան
- 9. Արշակ Կուսիկյան ֆաջ. Ալբարինյան

Վերաստուգիչ հանձնաժողով:

Ֆինանսական մինչդեռ ֆինանսական

Փոխ-Նախագահ, Մեջլում Տեր-Հարությունյան

Փոխ-Նախագահ, Մ. Թագեսոյան

- 1. Հովհաննես Կուլուչյան
- 2. Մատթեոս Դարբինյան
- 3. Նիկողայոս Թիգրիսյան

Անդամներ:

- 1. Գ. Ապրիկյան
- 2. Յ. Մյասնիկյան-Կուլուչյան
- 3. Ա. Կուլուչյանյան

- 1. Շ. Մալայան
- 5. Հ. Ղամրարյան
- 6. Լ. Ա. Փրկիկյան
- 7. Սարգս Բաղդասարյան

- 1. Ա. Հարությունյան
- 2. Ա. Յաղուրյան
- 3. Կ. Արյան

Գյուղատնտեսական հանձնաժողով:

- 4. Ա. Միհիթարյան
- 5. Հ. Փիրալյան
- 6. Պ. Կանդուրալյան
- 7. Հ. Փիրումյան

Գյուղատնտեսական
հանձնաժողով

Ծորեր մատակար, հանձնաժողով:

- 1. Ա. Թագեսոյան
- 2. Ա. Յաղուրյան
- 3. Պ. Թագեսոյան

Ծորեր մատակար, վարչություն:

- 1. Ա. Ծուրինյան
- 2. Հ. Աստամյան

Կոմիտեն ունի 142 անդամներ:

Հաշվը և հաշվեկիոր (բալանս) մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը 1923 թ. ստորև կցվում են այս աեղեկազրին:

1923 թ. սեպտեմբերի 1-ին:

ԱԿՏԻՆ

ՀԱՅՎԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳՆ

Առ 1-ի մա

Հ.	ՀԱՅԵՔԻՆ ԵՐԻ ԱՆՈՒԿԵՐ	Վայրուս.	Անդրկ. պահ. Բազարիներ
1)	Դրամարկղ Կանխիկ գումար անդրկովկասյան դրամանիշներով . . .	409—23	581,108
2)	Մանուֆակտորա Պահապահում կար 2808,6 արշ. զանազան մանուֆակտ. ապրանք . . .	1232—10	1,272,564
3)	Հին հազուստեղեն Պանվում եր պահապահում ընդամ. . .	203—56	187,275
4)	Գյուղատնտ. ֆ. հաշվին արած ծախը. Գնված են զանազան գյուղատնտ. գործիքներ Հայաստան ուղարկելու համար . . .	3474—46	4,873,365
5)	Պարտապաններ Պարտ են զանազան անձինք . . .	145—2	203,000
6)	Դաշտուսա Ունենք կանխիկ չերվոնեցներ . . .	317—30	444,223
7)	Առնաշիվ գումարներ Տրված ե առնաշիվ զանազ. անձ. . .	593—29	830,600
8)	Շարժական կայք Գնված ե զանազան դրասեն. կայք . . .	4—57	6,400
		6379—51	8,398,335

Կ Ե Ւ Ո
ՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

յիսի 1923 թ.

ՊԱՍԻ

Հ.	ՀԱՅԵՔԻՆ ԵՐԻ ԱՆՈՒԿԵՐ	Վայրուս.	Անդրկ. պահարաներ
1)	Համառուս. Մանուֆ. Սինդ.		
	Մնում ենք պարտ գնված մանուֆակտուրայի հաշվին մուրհակներով . . .	711—38	1,010,149
2)	Հասուկ գաղթակ. գումար Գտնվում ե կոմիտեյին մոտ այդ նպատակով ծախսելի գումար . . .	302—88	430,083
3)	Պարտատերեր Պարտ ենք զանազան հիմնարկությանց	2—42	3,395
4)	Գյուղատնտն. ֆոնդ Ստացված ե հոգուտ ֆոնդի. Ամերիկական Կոմիտեյից 2500 դ., վոր, հավասար ե 2135—71=2,990,000 Զանազան անձերից ե հիմնարկությունն. 651—16= 756,558	2786—87	3,746,558
5)	Դրամագլուխ Համարվում ե դրամագլուխ, զանազան աղբյուրներից ստացված ոգուտը և նվերները, վոր ամբողջովին հատկացվում ե հոգուտ գյուղատնտեսական ֆոնդի . . .	2575—96	3,208,350
		6379—51	8,398,535

Հ Ա

ՈԳՈՒՏ-ՎՆԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻ

Դ Ե Բ Ե Տ

Ծ Ի Վ

ՏԵՅԻ ՀԸՆԹԱՑՍ 1 ՄԱՅԻՍ-1 ՄԵԴ. 1923 թ.

Կ Պ Ե Պ Ե Տ

Հ Ա	Հ Ա Յ Ի Վ Ա Յ Ե Ր Ի Ա Յ Ո Ւ Կ Ա Յ	Վ.պլուս.	Ո.նրիկ. դրամ. հազարին.
1)	Ռոճիկներ	557—48	1,629,190
2)	Հնդացիկ ծախքեր	139—04	427,658
3)	Նպաստներ	3—47	14,400
4)	Բժշկա-սանիտ. ոգնութ.	34—87	126,325
5)	Ալեքողի պահեստների ծխը.	207—41	425,210
6)	Կուլուկի տարբերութ.	464—53	292,267
		1406—80	2,915,050
	Զուտ ոգուտ հընթացս $\frac{1}{3}$ — $\frac{1}{3}$, զոր և զրվում և հոգուտ Գյուղատնտես. ֆոնդի.	844—27	9,232,149
		2251—07	12,147,199

Հ Ա	Հ Ա Յ Ի Վ Ա Յ Ե Ր Ի Ա Յ Ո Ւ Կ Ա Յ	Վ.պլուս.	Ո.նրիկ. դրամ. հազարին.
1)	Հին հազուստեղեն	975—10	2,746,690
2)	Մանուֆակտուրա	184—52	795,644
3)	Զըսսանք-յերելույթներ	353—74	797,837
4)	Ապրանքներ	140—03	913,241
5)	Պատահական յեկամուտներ	2—95	6,623
6)	Զեղչեր	67—02	162,713
7)	Ալեքողի պահեստ	527—71	6,724,451
		2251—07	12,147,199

ՀԱՅՎԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԳՆ

ԱԿՏԻՎ

Առ 1-ն սեպտեմ

Տ	Հ Ա Յ Ի Վ Ա Բ Ա Ր Ե Ա Խ Ա Բ Ա Ր Ե Ա Խ	ՉԵՐ. Ա Ռ Ե Ա Խ	Ա Բ Ա Ր Ե Ա Խ Ա Բ Ա Ր Ե Ա Խ
1)	Դրամարկղ		
	Կանխիկ գումար անդրկովկասյան դրամանիշներով	20—85	92,794
2)	Վալյուտա		
	Կանխիկ չերվոնեցներ և չեկեր.	1906—85	3,417,420
3)	Մանոֆակտուրա		
	Զանազան մանուֆ. ապրանք 7478, 10 արշին և 279 հատ կոճի թել մեզ արժեց. գնով	5459—39	10,574,435
4)	Հին հագուստեղեն		
	Մնում և պահեստում, մեզ արժեց. գնով	111—88	246,250
5)	Ընթացիկ հաշիվ № 421		
	Ընթացիկ հաշվում չերվոնեցներով	510—»	846,600
6)	Ապրանք		
	Թիֆլիսի պահեստում զանազան ապրանքներ.	194—34	568,550
7)	Ալեքպոի պահեստ		
	Մնում և Ալեքպոի պահեստում՝ գյուղատնտ. գործիքներ 5753—32—8,951,424 Զանազ. ապրանքներ 2435—41—4,965,140 Պարտապաններ 875—91—1,182,480 Շարժական գույք 115—84— 148,275	9180—48	15,247,319
8)	Շարժ. գույք թիֆլ. գրասեն.		
	Զանազան գրասենյակային և այլ գույք թիֆլիսի գրասենյակում	13—12	17,950
			17396—91 31,011,318

Կ Ե Ւ Ո

ՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

ՔԵՐ 1923 թ.

ՊԱՍՍԻՎ

Տ	Հ Ա Յ Ի Վ Ա Բ Ա Ր Ե Ա Խ Ա Բ Ա Ր Ե Ա Խ	ՉԵՐ. Ա Ռ Ե Ա Խ	Ա Բ Ա Ր Ե Ա Խ Ա Բ Ա Ր Ե Ա Խ
1)	Փոխադրելի գումարներ		
	Վճարելիք սույն հաշվով.		55—52 111,040
2)	Տրված մրարակներ		
	Մուրհակներով պարտք ունենք տալու.	1228—50	4,028818
3)	Պարտատերեր		
	Վճարելիք սույն հաշվով.	» —46	375
4)	Դրամագլուխ		
	Կոմիտեյի գրամագլուխը հոգուտ Գյուղատնտեսական Փոնդի կար տարվա վերջը 15,646—63—17,638,936 Ավելացվում է զուտ ոգուտը $\frac{1}{5}—\frac{1}{9}$ 465—80— 9,232,149	16,112—43 26,871,085	
			<hr/>
			<hr/>
			<hr/>
			17,396—91 31,011,318

ԶԵԿՈՒՅՈՒՄ ՎԵՐԱՍՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Վերաստուգիչ հանձնաժողովը, բաղկացած Հ. Արագյանից, Մ. Դարբինյանից և Ն. Թերզիբաշյանից, իր կազմակերպչական նիստում ըստել ե նախագահ Հ. Արագյանին և քարտուղար Մ. Դարբինյանին: Նախագահը, համաձայն հանձնաժողովի վորոշման, մասնակցել ե Հ. Ռ. Կ.-ի վարչության բոլոր նիստերին, իսկ կարեր հարցերի քննության ժամանակ մասնակցել ե նաև ամբողջ կազմով:

Հանձնաժողովն իրազեկ ե յեղել վարչության ընթացիկ աշխատանքներին և ամիսը մի քանի անգամ ստուգել ե թե հաշիվները և թե դրամարկղը: Հաճախ ներկա յեղել հին հազուստեղենի գնահատման և վաճառման ժամանակ. կատարել ե նաև անակնկատ ստուգումներ հին հագուստեղենի, մանուֆակտուրայի և դրամարկղի միացորդների:

Խոշոր գնումները կատարվել են մասնաժողովների միջոցով, իսկ զյուղանտեսական գործիքներ գնելիս հրավիրվել են նաև մասնագետներ: Հանձնաժողովի նախագահն ըստ հնարավորության ներկա յեղել այդ գնումներին:

Վարչությունը մինչև 1923 թ. մայիսի 1-ը հաշիվները տարել ե «հասարակ» սիստեմով, իսկ մայիսի 1-ից, ի նկատի ունենալով շրջանառության ընդլայնումը, մտցրել ե կրկնակի իտալական հաշվագություն:

Վարչությունը, բացի հին հագուստեղենի վաճառքից՝ կազմակերպել ե նաև մանուֆակտուրայի վաճառք: Հանձնաժողովի կարծիքով հին հագուստեղենի վաճառքին ավելի պիտի զարկ տալ, քան թե մանուֆակտուրային գործիքն: Ամառը թեև կանգ եր առել վաճառքը, ապրանք չունենալու պատճառով, բայց սեպտեմբերին վարչությունը, ստանալով նոր հակեր, վերսկսել ե եժան գներով վաճառել հին հագուստեղեն իր անդամներին, նրանց ընտանիքներին ու աշխատավոր կոլեկտիվներին:

Առանձին ուշադրության արժանի յե վարչության կազմակերպած «Գյուղանտեսական Ֆոնդը», վորը մատակարարում է Հայաստանի զյուղացությանը զյուղանտեսական ընտիր գործիքներ և անհրաժեշտ ուրիշ ապրանքներ:

Այդ նպատակով Ալեքսանդրապոլում բացած պահեստը բավականին արժան գներով և ծախում ապրանքները, քան տեղի այլ մա-

նավոր խանութները: Ալեքսանդրապոլի պահեստը պարբերաբար ուղարկում է Թիֆլիս իր հաշիվները:

Հանձնաժողովը, մանրամասն ստուգելով բոլոր հաշիվները, փառաթղթերը, առլրանքի մնացորդներն ու դրամարկղը, գտել ե ճիշտ և հոմալպատառություն հաշվապահական զրքերին: Վերոհիշյալ հաշիվներից յերեսում ե, վոր մինչև սեպտեմբերի 1-ը 1923 թվի վարչությունը մուտք ե ունեցել՝ Ամերիկական կոմիտեյից 5,000 դոլար չեկերով, վոր հավասար է վոսկով 5,734 ռ. 09 կոպեկի, զանազան անձերից և այլ աղբյուրներից՝ 6,469 ռ. 92 կ. վոսկով, վոր միասին կազմում է 12,204 ռ. 01 կոպեկ. ընթացիկ այլ և այլ ծախս յեղել է 1,406 ռ. 80 կոպեկ: Դուրս գալով ծախսը մուտքից, մնում է զրամագլուխ առ. 1-ն սեպտ. 1923 թ. 10.797 ուուրի 21 կոպեկ (վոսկով), կամ չերվոնեցի ուուրլիներով 16.112 ռ. 43 կ., վոր և գործ է զրվում «Գյուղատնտ. Ֆոնդի» նպատակներին: Այսպիսով վարչությունը կարողացել է իրազործել Ամերիկական կոմիտեյի հետ ունեցած պայմաններ:

Վերջացնելով զեկուցումը, ավելորդ չի համարվում հիշատակել՝ նախագահության, վարչության և զանազան կոմիտաների անդամների յեռանգը, վորոնք չեն զարցել իրենց ազատ ժամանակը նվիրելու Հ. Ռ. Կ.-ի միջոցները ուժեղացնելու համար կազմակերպված աշխատանքներին: Անպայման վերոհիշյալ աշխատանքներին պիտի վերագրել, վոր այսոր Վրաստանի ճյուղը սկսել է «Գյուղատնտեսական Ֆոնդի» իրազործումը:

Գյուղատնտ. համաձայնություն,

24 սեպտեմբերի 1923 թ.

Թիֆլիս.

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ

ՀԵՅԱՍՏԱՆԻ ՊԴՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԸ ԱՏԵՍՈՒՑՔ

Ա. ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԱՆԵԼԵՐՆԵՐԸ

1. Հ. Ռ. Կ.-ի անմիջական նպատակն է ովնության հասնել Հայաստանի սովորական պահանակության և իր այդ գործունելության ընթացքում նաև ոժանդակել յերկրի ընդհանուր շինարարության դորձին:

2. Յոդ. 1 ում առաջադրյալ նպատակներին հասնելու համար
Կոմիտեն՝

ա. Գանձում ու հավաքում ե զրամական թե իրերով և հատ-
կապես մթերքներով նվիրատվություններ, ինչպես Հայաստանում,
նույնպես և արտասահմանում, առանձնապես արտասահմանյան հայ-
գաղութներում:

բ. Փոխադրում և բաշխում ե այս ամենը թե կառավարական
և թե իր մարմինների միջոցով:

գ. Գրավոր թե բանավոր պղոպագանդ ե մղում (հրատարակու-
թյուններով, հրապարակային ժողովներում և այլն), այլ և հատուկ
նվիրակներ և պատգամավորներ և ուղարկում արտասահման, հարա-
բերություն պահպաններով արտասահմանի հասարակական այն որ-
գանների հետ, վորոնք կարող են այդ նպատակի համար ոգտակար
լինել:

դ. Ընդհանրապես ձեռք ե առնում այն բոլոր որինական մի-
ջոցները, վորոնք անհրաժեշտ են համարվում ներկա ստատուտով
նախատեսնված նպատակներին հասնելու համար, առանձին ուշա-
դրության առնելով հայ գաղութների աջակցությունը:

Բ. ՄԻ ԶՈՑՆԵՐԸ

3. Հ. Ռ. Կ.-ի միջոցներն են կազմում.

ա. Ընդհանրապես նվիրատվությունները և մասնավորապես հայ
դադութներից ստանալիք դրամական թե իրերով և թե մթերքներով
սպնությունը.

բ. Հրատարակություններից, հավաքույթներից և այլ սփացած
մասնակի մուտքերը:

Գ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Հ. Ռ. Կ.-ի կազմն ե՝

ա. Ընդհանուր ժողով,

բ. Նախագահությունը և

գ. Վերաստուգիչ հանձնաժողով:

5 Նախագահությունը հանդիսանում է Կոմիտեյի բարձրագույն
գործադիր մարմինը, վոր գործում ե ներկա ստատուտի շրջանակ-
ներում և ընդհանուր ժողովի վորոշումների և հրահանգների համա-
ձայն:

Դ. ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Հ. Ռ. Կ.-ն իր նպատակներով և թե իր կազմակերպման սիս-
տեմով, անկախ իր անդամների քաղաքական դավանանքից և կու-
սակցական հանդամներից, հասարակական մարմին և հ, իբրև այդպի-
սին, նա իրեն հայտարարում ե չեզոք քաղաքական և կուսակցական
պայքարի հանդեպ:

7. Հ. Ռ. Կ-ն յենթակա յե բացառապես ժողկոմների Խորհրդի
հակողության և ազատ և առանձին ժողկոմների, ինչպես նաև տեղա-
կան իշխանությունների իրավասությունից:

8. Կոմիտեյի անդամները իրենց գործունեյության միջոցին և այդ
գործունեյության առթիվ կատարած հանցանքների համար պատաս-
խանատույթին անհատականորեն և վոչ թե հավաքականորեն և միա-
ժամանակ ընդդացայ յեն միմիայն ժողովրդական դատարաններին:

9. Հ. Ռ. Կ-ն իրավարանական անձն և և ունի իր սեփական
կոմիտե:

10. Կ.-ի հասցեյով ուղղված զրամները, իրերը և ընդհանրապես
ամբողջ գույքը պատ են պետականացումից, բոնազրակումից և
այլ սահմանափակիչ որենքներից և միաժամանակ ներքին թե ար-
տաքին փոխազրությունների ընթացքում ողտվում են պետական
գույքերին վերապահված արտանություններով:

11 Կոմիտեն իր տրամադրության յենթակա զրամները, ընդ-
հանրապես զույգը գործազրում և սույն ստատուտով նախատեսնված
նպատակների սահմաններում բատ իր հայեցազության, իսկ իր նր-
պատակներին համապատասխան հատուկ նվերները գործազրում և
համաձայն նվիրատիվ կամքին:

12. Կոմիտեն իրավագոր և զրավոր թե լանավոր գեկուցում-
ներ ներկայացներ, զիմումներ անել ժողկոմների Խորհրդի նախա-
գահին և առանձին ժողկոմներին իր գործունեյության հետ կապ-
ված և նրանից բվասդ հարցերի մասին, ստանալով նրանցից, ինչպես
և ընդհանրապես Խորհրդային իշխանության կենտրոնական թե տե-
ղական մարմինների կողմից լայն աջակցություն:

13. Կոմիտեյի կենտրոն և Յերկան:

Հայաստանի Ազգային Խորհրդին:

1921 թիվ, Սեպտեմբեր
Յերկան:

ՍՏԵՍՈՒՑ ՀԱՅԵՍՈՒՆԻ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՄԻՏԵՑԻ

1. Նպատակը եվ գործունեյության սահմանները

§ 1. Հայաստանի Ոգնության Կոմիտեյի նպատակն են՝
ա) աջակցել յերկրի անտեսական և կուլտուրական շինա-

րաբությանը,
բ) ոգնել Հայաստանի ազգաբնակությանը սովոր և այլ ա-

զետների ժամանակ:

§ 2. Կոմիտեն իր նպատակներին հասնելու համար գործում
ե ինչպես իր, նույնպես և պետական ու հասուրակական
ապահարատների միջոցով:

§ 3. Կոմիտեն սովոր և այլ աղետների դեմ մաքառելու համար՝
ա) մատակարարում ե կարույալներին մթերք,

բ) հիմնում ե ճաշարաններ և թեյարաններ,

գ) բաշխում ե հագուստեղեն,

դ) կամակերպում ե բժշկական ոգնություն, հիմնելով ժա-

մանակավոր հիվանդանոցներ, ֆելդշերական կետեր,

գեղարաններ, թոռուցիկ բժշկական խմբեր և այլն,

յե) աջակցում ե համանման հիմնարկություններին:

§ 4. Հայաստանի շինարարական գործին նպատակն համար
Կոմիտեն՝

ա) մատակարարում ե գյուղացիներին սերմացու, գյու-

ղատնատեսական գործիքներ, լծկաններ, կթաններ,

բ) բաշխում ե անհրաժեշտ գեղորայք անասունների, այ-

պիների և բանջարանոցների վարակիչ հիվանդություն-

ների դեմ,

գ) աջակցում ե ավերված գյուղերի վերաշինությանը,

դ) տարածում ե գործնական և տեխնիքական գիտելիքներ,

յե) հիմնում ե պյուղատնտեսական և արդյունագործական
ձեռնարկություններ:

§ 5. Կոմիտեն յերկրի շինարարական կարիքների համար հիմ-

նում ե բանկ:

§ 6. Կուլտուրական շինարարությանը դարձ տալու համար
Կոմիտեն՝

ա) ոգնություն ե հասցնում ժողովրդական դպրոցներին,
աջակցելով յեղածների պահպանմանը, նորերի բաց-

մանը,

բ) կառուցանում ե և վերանորոգում դըպրոցական շենքեր,

գ) մատակարարում ե գիտական պիտույքներ և գործիք-

ներ, դպրոցական պարագաներ,

դ) ոժանդակում ե կուլտուրական հիմնարկություններին,

Հայաստանի ժողովրդական համալսարանին, հանրային

գրադարանին, ազգային թանգարանին, գիտական

ինստիտուտին, ժողովրդական տներին, գրադարան-ըն-

թերցարաններին, գյուղական և գավառական թատրոն-

ներին և այլն,

յե) նպատակում ե հրատարակչական գործի դարձացմանը

Հայաստանում,

զ) հիմնում ե հատուկ ֆոնդեր յերկրի կուլտուրական աշ-

խատագորների, գեղարվեստագետների, գիտնականների

վիճակը բարելավելու համար:

§ 7. Վերոհիշյալ նպատակներին համնելու համար Կոմիտեն՝

ա) անում ե բանավոր և գրավոր պրոպագանդա,

բ) հատուկ նվիրակներ և պատգամավորներ ե ուղարկում
արտասահման,

դ) մշտական և սերտ հարաբերություն ե պահպանում

արտասահմանյան այն կազմակերպությունների հետ,

վորոնք կարող են ոպտակար լինել ոգնության ու շ-

նարարական գործին:

II. Ոգնության յեղանակը

§ 8. Հ. Ո կ. ընդունում ե սկզբունքով դլամավորապես աշխատան-

քային ոգնությունը:

§ 9. Անվերադարձ ոգնությունը տրվում ե վորպես բացառու-

թյուն, ամեն անդամ զլամավոր վարչության առանձին վորոշմամբ:

§ 10. Աշխատանկքային ոգնությունը կիրառելու համար Կոմի-

տեն կառավարության թույլտվությամբ կազմակերպում ե հանրա-

յին աշխատանքներ, ինչպես են ճանապարհների, առուների և փո-

ղոցների վերանորոգելը, նոր ճանապարհներ, առուներ և փողոց-

ներ շինելը, ճահիճներ ցամաքեցնելը, վառելու և շինության

30

փայտ պատրաստելը, ավերված դյուղերի վերանորոգումը, կրթական շինություններում և պետական կալվածքներում աշխատելը և այլն:

III. Հ. Ռ. Կ. միջոցները

- § 11. Հ. Ռ. Կ.-ի միջոցները կազմում են՝
 ա) դրամական նվիրատվություններ՝
 բ) պարենների
 գ) շորեղենի
 դ) գեղորայքի
 յե) զանազան պարագաների նվիրատվություններ կուտառական շինարարության համար,
 զ) ընդհանուր ժողովարարություններ,
 ե) համայնական կամավոր տուրքեր,
 ը) յեկամուաններ կոմիտեյի ձեռնարկություններից, ներկայացումներից, յերեկոյթներից, զրոսանքներից, հըրատարակություններից, դաստիոսություններից, վհճակախաղից և այլն:

IV. Հ. Ռ. Կ. կազմակերպությունը

§ 12. Կոմիտեն կազմված է 1) համագումարից, 2) զլիսավոր վարչությունից, վոր գտնվում է Յերևանում և 3) վերաստուղիչ հանձնաժողովից:

§ 13. Կոմիտեն ունի հիմնական և իսկական անդամներ: Հիմնական անդամ համարվում են կոմիտեյի հիմնադիրները և յուրաքանչյուր տարի զլիսավոր վարչության առաջարկությամբ համագումարում ընտրված անդամները: Իսկական անդամներ համարվում են ճյուղերի անդամները:

§ 14. Գլխավոր վարչությունը բաղկացած է 9 անդամից և 3 փոխ-անդամից, վորոնց ընտրում է համագումարը մի տարի ժամանակով մինչև մյուս հերթական համագումարը:

§ 15. Վարչության նախագահին և փոխ-նախագահին ընտրում է համագումարը, իսկ քարտուղարին և զանձապահին—վարչությունը:

§ 16. Վերաստուղիչ հանձնաժողովը բաղկացած է 3 անդամից և փոխ-անդամից, վորոնց ընտրում է համագումարը մի տարի ժամանակով մինչև մյուս հերթական համագումարը:

§ 17. Հերթական համագումար հրավիրվում է տարենը մեկ անգամ (աշնանը) Յերևանում: Համագումարին իրավունք ունին մասնակցելու 1) հիմնական անդամները, 2) Հայաստանից դուրս գտնված յերկրների կենտրոնական ճյուղերի ներկայացուցիչները (որ. Թիֆլիսի, Բագդի, Մուկվայի և այլն), վորոնց թիվը վորոշում եւ վարչությունը:

§ 18. Համագումարում բոլոր հարցերը վճռվում են ձայների բացարձակ մեծամասնությամբ: Կոմիտեյի լիկվիդացիայի խնդիրը վճռվում է ներկա յեղող անդամների ձայների $\frac{2}{3}$ -ի մեծամասնությամբ:

V. Հ. Ռ. Կ. Շյուղերը

§ 19. Կոմիտեն կարող է ունենալ իր ճյուղերը Հայաստանում և արտասահմանում:

§ 20. Կոմիտեյի ճյուղեր Հայաստանում բացվում են կամ զլիսավոր վարչության անդամների անմիջական ղեկավարությամբ և կամ նրա կողմից լիազորված անձանց նախաձեռնությամբ:

§ 21. Հայաստանի սահմաններից գուրս կոմիտեյի ճյուղերը կազմակերպվում են ներկա ստատուտի մեջ հիշված հիմունքներով տեղական ազգային-հասարակական մարսնությունների և գործիչների նախաձեռնությամբ:

§ 22. Արտասահմանյան կենտրոնական վայրերում և մայրաքաղաքներում գոյություն ունեցող կոմիտեները համարվում են կենտրոնական կոմիտեներ, վորոնց յենթակա յեն գավառական կոմիտեները: Գավառական կոմիտեները վարում են իրենց գործերը տեղական կենտրոնական կոմիտեյի հսկողության տակ և իրենց ժողովածմիջոցները հասցնում են Հայաստան նույն կենտրոնական կոմիտեյի միջոցով:

VI. Հ. Ռ. Կ. իրավական դրությունը

§ 23. Հ. Ռ. Կ. իր նպատակներով և կազմակերպման սխտեմով, անկախ իր անդամների քաղաքական դավանանքից և կուսակցական հանդամանքից, հասարական մի մարմին և և հայտարարում է իրեն չեղոք քաղաքական և կուսակցական պայքարի հանդեպ:

§ 24. Հ. Ռ. Կ. յենթակա յե բացառապես ժողովների Խոր-

հրդի հսկողության և ազատ ե առանձին ժողկոմների, ինչպես նաև տեղական իշխանությունների իրավասությունից:

§ 25. Կոմիտեն իր արամագրության յենթակա դրամները և ընդհանուրապես զույքը գործադրում ե սույն ստատուտով նախատեսնոված նպատակների սահմաններում ըստ իր հայեցողության, իսկ իր նպատակներին համապատասխան հատուկ նվերները գործադրում ե համաձայն նպիրատվի կամքի:

§ 26. Կոմիտեյի անդամներն իրենց գործունեյության միջոցին և այդ գործունեյության առթիվ կատարած հանցանքների համար պատուախանատու յեն անհատականորեն և վոչ թե հավաքականորեն և միաժամանակ ընդդադյան յեն ժողովրդական դատարաններին:

§ 27. Կոմիտեյի հասցեյով ուղղված դրամները, իրերը և ընդհանուրապես ամբողջ զույքը ազատ են պետականացումից, բռնագրավումից և այլ սահմանափակիչ որենքներից, և սիաժամանակ արտաքին փոխադրությունների ընթացքում ոգտվում են պետական գույքերին վերաբերյալ արտոնություններով:

§ 28. Հ. Ռ. Կ. իրավաբանական անձն և ունի իր սեփական կոլեքտ:



Հայաստանի Ռ. Կ. Կոմիտեյի վրաստանի հյուղի հասցեն.

1. Թիֆլիս. Սերգեևսկի փողոց № 9.
2. Թիֆլիս. Սերգեևսկայ պող. ճ. № 9.
3. Tiflis. Serguevski № 9.



43.220

Главлит № 680.

Тираж 400.